Հաստատում եմ՝

Տնօրեն ----------Ս. Ենգիբարյան

«31» օգոստոսի 2023թ.

Ուսումնական հաստատության դասղեկի տարեկան աշխատանքային ծրագիր Արմավիրի մարզի ք. Վաղարշապատի «Ներսիսյան» թիվ 6 հիմնական դպրոց

Դասարան՝ 9ա

Դասղեկ՝ Ն. Ջավադյան

Դասարանի ընդհանուր բնութագիրը. *9-րդ* դասարանում սովորում է 26 աշակերտ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ: Դասարանական կոլեկտիվը միասնական է և ամուր:Դասարանում կարևորվում է փոխըմբռնման մթնոլորտի կայունությունը,ուսման առաջադիմությունը,հարգալից վերաբերմունքը ուսուցիչների և միմյանց նկատմամբ: Սովորողների միջև առաջացած խնդիրներն ու տարաձայնությունները լուծվում են փոխըմբռնման,փոխզիջման,հանդուրժողականության միջոցով:

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում. 2023-2024ուստարում ևս ձևավորել առողջ դասարանական կոլեկտիվ ու մթնոլորտ:Ձևավորել համախմբված և օրինակելի դասարանական ակտիվ:Սովորողների մեջ դաստիարակել,ձևավորել շրջապատը սիրելու,գնահատելու,այն մաքուր պահելու կուլտուրան/սկսած դասասենյակից/,ապահովել մասնակցությունը հասարակական միջոցառումներին: Հետևողական լինել սովորողների առաջադիմությանը,համագործակցել դասարանի սովորողների,դասավանդող ուսուցիչների,ծնողների հետ:Աջակցել,կազմակերպել և անցկացնելնախատեսվող միջոցառումները,տարաբնույթ էքսկուրսիաները/այցելություն թանգարաններ,պատմամշակութային վայրեր,բնության գեղատսիլ վայրեր/: Նպաստել սովորողների՝ բազմակողմանի զարգացած անհատ ձևավորվելուն,ինչպես նաև դպրոցի,հայրենիքի,հասարակության համար պիտանի անհատի ձևավորմանը:

Հայեցի դաստիարակություն

.Նպաստել սովորողի բարոյական ձևավորմանը:Ուղղորդել սովորողներին գնահատել և արժևորել մարդկայինը,ոգեղենը,աննյութականը՝սեր,ազնվություն,գթասրտություն,խաղաղասիրություն,մարդասիրություն:

.Սովորողների մոտ ձևավորել գեղագիտական կուլտուրան:Գեղագիտական թեմաներով զրույցներ ու դասախոսություններ անցկացնել,ինչպես նաև մասնակցել պոեզիայի երեկոների,հետաքրքիր հանդիպումների,հաղորդակցման ,վերլուծման այլ ձևերի ու միջոցների:

. ,,Հայրենասիրությունը սկսվում է ինձնից,,. այս խորագրով առաջնորդվելով՝ սովորողների մոտ բարձր պահել հայրենասիրական ,ազատատենչ ոգին՝ դասեր քաղելով ոչ միայն պատմական անցյալի,այլև ներկայի էջերից՝ նպաստելով սովորողների արժեքային համակարգի ճիշտ ձևավորմանը:

. Ամրապնդել սովորողների ֆիզիկական զարգացումն ու առողջությունը:Պահպանել հետաքրքրությունը ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ,ուղղորդել հաճախել մարզական պարապմունքների՝,,Առողջ հոգի՝առողջ մարմնում,,կարգախոսով:

. Սովորողների մեջ սեր ներարկել դեպի աշխատանքը,աշխատասիրությունը ,ձևավորել աշխատանքային և գիտակցական կարգապահություն:

. Սովորողների մեջ ձևավորել բնության պահպանության պատասխանատու անդամ:Սովորողներին հասցնել այն գիտակցությանը,որ բնությունը ազգային-հասարակական հարստություն է,որը պետք է պահպանել:

. Նպաստել դպրոց-ընտանիք կապի ամրապնդմանն ու զարգացմանը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակություն

Կատարման ժամկետը	ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարող/ներ/
Սեպտեմբեր	Դաստիարակչական խնդիրների ճշգրտություն ու իրատեսություն	Դասղեկ
Սեպեմբեր	Դասարանի աշակերտների վերաբերյալ ճշգրիտ և սպառիչ տեղեկությունների հավաքագրում	Դասղեկ Ծնողներ Սովորողներ
Ուստարվա սկիզբ	.Դասագրքերի բաշխում սովորողներին .Դասարանական ակտիվի ձևավորում .Ծնողական խորհրդի կազմի ձևավորում	Դասղեկ Գրադարանավար Սովորողներ Ծնողներ
Ուստարվա ընթացքում	Հետևողական լինել աշակերտների կողմից դպրոցական գույքի պահպանմանը	Դասղեկ Սովորողներ
Ուստարվա ընթացքում	Ծնողների հետ համագործակցելով նպաստել սովորողների կարգապահական կուլտուրայի ձևավորմանը	Դասղեկ Ծնողներ Սովորողներ Ուսուցիչներ
Ուստարվա ընթացքում	Հետևողական լինել սովորողների հաճախումներին, առաջադիմությանը, կարգապահությանը, ինչպես նաև սահմանված հերթապահությանը	Դասղեկ Դաս.ակտիվ
Ուստարվա ընթացքում	Աշակերտների առաջադիմությունն ու դաստիարակությունն ուսումնասիրելու նպատակով կատարել դասալսումներ տարբեր առարկաներից	Դասղեկ
Ուստարվա	Կազմակերպել ծնողական ժողովներ	Դասղեկ

ընթացքում	աշակերտների առաջադիմության, վարքի, դասղեկ-ծնող-ուսուցիչ կապը ամրապնդելու նպատակով	Դասավանդող ուսուցիչներ Ծնողներ Տնօրեն Փոխտնօրեններ
Ուստարվա ընթացքում	Ապահովել սովորողների ներգրավվածությունն ու մասնակցությունը ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքներին,միջոցառումներին	Դասղեկ Ծնողներ
Մայիս	Դասագրքերի հավաքում և հանձնում	Դասղեկ Գրադարանավար Սովորողներ
Կիսամյակների ավարտին	Ծնողական խորհրդակցություններ՝կիսամյակ/ներ/ի ,ուստարվա արդյունքների ամփոփում	Դասղեկ Ծնողներ

Դասարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկա

1.	Գիտելիքը ուժ է
2.	Մեր ակնկալիքներն ու նպատակներն այս ուստարում
3.	Անկախության տարելից
4.	Ուսուցիչ- մեծարում և խոնարհում
5.	Հանդուրժողականություն
6.	Հանդուրժողականության սահմանումը
7.	Հանդուրժողականություն և օրենք
8.	Խաղաղության մշակույթի ձևավորմանն ուղղված գործնական աշխատանքներ,խաղեր
9.	Խաղաղության մշակույթի ձևավորմանն ուղղված գործնական աշխատանքներ,խաղեր
10.	Խաղաղության մշակույթի հաստատումը/ձևավորումը/
11.	Խաղաղության մշակույթի հաստատումը/ձևավորումը/
12.	Աշնանային սիմֆոնիա
13.	1988-Երկրաշարժ.չսպիացող վերք
14.	Որոշումների կայացում
15.	Ամանորյա մտորումներ
16.	Նոր սկիզբ....
17.	ՄԱԿ-ը՝ որպես միջազգային խաղաղարար կազմակերպություն
18.	ՄԱԿ-ը՝ որպես միջազգային խաղաղարար կազմակերպություն
19.	ՄԱԿ-ը՝ որպես միջազգային խաղաղարար կազմակերպություն:ՄԱԿ- անդամ պետություններ
20.	Գարնանային անուրջներ
21.	Մայր-սրբասուրբ և քնքուշ էակ
22.	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
23.	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
24.	ԵԱՀԿ մինսկի խումբ
25.	Ապրելու ապրիլ

26.	Եղեռն-մեր պատմության ցավալի և արյունոտ էջը
27.	Մայիս-հաղթանակների ամիս
28.	Մենք անպարտելի ենք
29.	Ճանաչենք մեր Հայրենիքը
30.	Ես ձուլված եմ իմ Հայրենի բնությանը
31.	ՄԵՆՔ...
32.	Սիրո մեծ ուժը
33.	Տարեվերջյան մտորումներ...Ավարտում ենք....
34.	Հրաժեշտից առաջ